նությամբ այդ մարդիկ արժանանում էին աստուծու փողոցմության: Պիտներնների մեջ ահամա հարց է ծագում. «ո՞վ էր կազմում այդ գրքերը»—Այդ գրքերը գրում էին այն հեղինակները, վորոնց դրա համար շատ փող էին վճարում կապիտալիստները:—«Վորտեղ էին տպվում, այս գրքերը»—«Իհարկե տպարանում, վորը բուրժուանների սեփականությունն էր»: (Բանվորները միջոցներ չունեին սեփական տպարաններ բաց անելու համար):—«Հետո ի՞նչ էին անում այդ գրքերը»—«Վաճառում էին գրախանութներում»: «Ո՞վ էր վաճառում»—«Բուրժուազիան»: «Տարածում էին գրադարաններում».—«Ո՞վ էր տարածում».—«Բուրժուական իշխանությունը»: Նման կարճ գրույցի միջոցով յերեխաները իմանում են, վոր ատաղ զիրքը ուժեղ զենք էր բուրժուազիայի ձեռքում մասսաներին հողեպես սարկայնելու համար: Ինչո՞ւ այդ ժամանակ չկային մասսայական հակաիրոնական գրքեր: Վորովհետև կառավարությունը անխնա հալածում էր նման գրքերը, արգելում էր նրանց հրատարակությունը, իսկ հակառակ իր կամքին հրատարակվածները աքրում էր:

Պիտներների հասարակական աշխատանքն ամեն ուղղությամբ կարող է և պետք է լինի հակակրոնական:

Հակակրոնական աշխատանքի մի այլ մեթոդ հիմնվում է պիտներների բնագիտական և հեռադատական աշխատանքի վրա: Թեև «աստուծու» պրոբլեմը բնագիտականից ավելի հասարակագիտական—պատմական պրոբլեմ է, այնուամենայնիվ բնագիտությունը հրաշալի կերպով մերկացնում է կրոնական նախադաշարումները: Հակակրոնական պրոպագանդի գործի համար այդ նույնպես կարևոր է, քանի վոր աշխատավորները և նրանց յերեխաները մինչև այժմ դեռ լիովին չեն ազատվել կրոնական նախադաշարումներից: Տիեզերքի, մարդկության ծագման, Իարվինի տեսակետների ծագման թեորիայի, աստղագիտությունից տարրական դիտելիքներին վրաբերյալ հիմնական գիտական ավյալները նույնպես արժեքավոր զենք են աստվածաշնչի անհեթեթությունների դեմ:

Վաղուց իվեր հայտնի յե այն աբսիուդան, թե այնտեղ, ուր գիտությունն մի քայլ առաջ է դնում, կրոնը յերկու քայլ յետ է դնում:

Այն մասին թե ինչպես դիտական միջոցը և սոցիալիստական շինարարության բազան քանդում են կրոնի արմատները, Ն. Կ. Կրուպսկայան գրում է հետևյալ ուշադրավ տողերը.

«Հակակրոնական պրոպագանդը պետք է կազմակերպել վորքան կարելի յե ավելի կոնկրետ, կապակցելով սոցիալիստական ամբողջ շինարարության հետ:

Ազրոնոմիայի հաջողությունները, նրա լայն կիրառումը գյուղացիական անասնաբուժյան մեջ խորտակում են այն հավատքը, թե բերքը կախված է աստուծու կամքից... Միայն պետք է, վոր անասնաբույժներն ունեն ըմբռնելու ազրոնոմիայի հաջողությունների հակակրոնական իմաստն ու նշանակությունը: Բերքատվությունը բարձրացնելու համար մղված պայքարը, հողի մշակման նոր ձևերը կտախպեն հրաժարվել պատկանական արտադրյալներից, կտանդեն չափազանց նպաստավոր հող հակակրոնական պրոպագանդայի համար: Միայն պետք է խելացի կերպով մոտենալ գործին: Ճիշտ նմանապես ելեկտրիֆիկացիայի նորա-

նոր մեծ հաջողությունները, գյուղացիական խրճիթների ելեկտրական լուսավորությունը պետք է ոգտագործվեն վերջնականապես թաղելու Յեղիա մարդարեյին: Յուրաքանչյուր ելեկտրոկայան հակակրոնական արամադրությունների ոչախ է, հարուստ նյութ հակակրոնական պրոպագանդի համար:

Յերկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության մեքենայացումը, նրա ռացիոնարացումը—այս բոլորը խրում են բնության և տարերային ուժերի աստվածացման արմատները...»:

Պիտներների բնագիտական աշխատանքը տեղի յե ունենում գաղտնյում, պատանի բնագետների խմբակում և վերջապես կոնկրետիվում: Իպրոցում պիտներն ստանում է մի շարք սիստեմատիկ հետևողական գիտելիքներ բնության և նրա յերևույթների մասին վորոչ ծրագրով, խմբակում մասնագիտանում է բնագիտությունից և գյուղատնտեսությունից առանձին ճյուղերում, իսկ կոլեկտիվում վորձում գործնական կերպով ուսումնասիրել գաղտնյում իրեն տրված նյութը, վորը հաճախ դժբախտաբար, շատ վերացական է: Կոլեկտիվի աշխատանքն սպտակար է նրանով, վոր այստեղ պիտները կարող է դրադիվել բնությանը դիտելով, մանավանդ յեր կոլեկտիվը դնում է կազերում: Երկուսիստների մասնակ կարելի յե ուսումնասիրել ձորերը, գետերը, անտառները, դաշտերը, հովիտները և կաղմել միջատները, բույսերը, հանքերը կայրեկցիաները և այն: Սակայն այս բոլոր աշխատանքները լիարժեք, քաղաքականապես ճիշտ չեյին լինի, յեթե չհետապնդեյին հակակրոնական խնդիրները:

Նման աշխատանքի հետևանքով պիտներները զխտակցաբար ըմբռնում և համոզվում են, վոր կայծակը «Յեղիա մարդարեյի հրեղեն կտորը» չէ՛ այլ միջնորտային ելեկտրականությունից պարապլեմը, վոր անձրեք աստուծու հրամանից և ցանկությունից կախված չէ, այլ քամիների ուղղությունից, գորշիացումների քանակությունից, վոր անհնար է «վոչնչից» աշխարհը ստեղծել վեց որում և յերկրաբանությունը յերկրի շերտերից վորոշում է, վոր յերկրագունդը գոյություն է ունեցել հարյուր միլիոնավոր տարիներ:

Բնավ կարիք չկա պիտներներին յերկար գեկուցումներ կարդալ կրոնի և գիտություն անհամատեղելիությունից, ավետարանի հակասությունների, աստուծու չղոյությունից և այլ մասին: Անհրաժեշտ է, յերեկույ կոնկրետ պայմաններից, կոնկրետ դեպքից կամ յերևույթից, անց կացնել կարճ, բայց խնամքով պատրաստված գրույցներ:

Չբույցը պետք է ընթանա հետևյալ կարգով. դեկափարը տալիս է մի շարք, նախորդ պատրաստած հարցեր, հետո յերեխաները պատասխանում են այդ հարցերին, անում են իրենց դիտողությունները, մյուս պիտներներին ներդրավելով խոսակցություն մեջ, վերջը դեկափարն ամփոփում է բոլորը:

Քրիստոնեյական յեկեղեցու վորոչ ծիսակատարությունները, յեկեղեցու շենքի շրջությունը, հանդիսավորությունը, յերկեցողությունը, լուսավառությունը, ծաղիկները և այլն անկասկած վորոչ չափով գրավում է յերեխաներին, նույնպես պարզապես չարժեղով նրանց հետաքրքրությունը: Այդ լիովին հասկանալի յե պիտներական տարիքի յերեխաները հետաքրքրել են, ուզում են ամեն ինչ իմանալ: Նույնիսկ յերբեմն պատահում են նման կուրյոյներ. յերեխաները թա-

Դանձում են կոլվարին, «գու գիտես», մենք անաստված ենք, բայց
իբրև ուզում ենք զարկել յեկեղեցու զանգերը. թող դնանք զանդա-
հատունը:

Արտաքին փայլը, վորը զանավանվում է առորյա կյանքից, յեկե-
ղեցու միտիկան, խորհրդավորությունը, թատրոնականությունը
հաճախ իրենց ցանցի մեջ են առնում վաչ քննադատորեն տրամադրված
յերեխաներին:

Ինչպե՞ս վարվել այստեղ:

Նախ և առաջ չպետք է որդապետ արդելի, այլ սխտեմատիկ
կերպով բացատրել ծեսերի միասակարությունը: Պիտներները և մյուս
յերեխաները պետք է հասկանան, վոր մենք չունենք ճշոշոյնների և ճշնչ-
վածների համար հավասար դասակարգային խաղաղության տոներ,
մեր տոները հեղափոխական մտրտական տոներ են:

Յերեխաներին պետք է գրավել, վորդելորել պիտներական հեղափո-
խական գրամատիկացիայով: Վորպեսզի յերեխաները կրոնական տո-
ներին յեկեղեցի չգնան (իսկ յերբեմն նրանք գնալու տեղ չունեն, բացի
ձանձրալի փողոցից և տնից), մենք կազմակերպում ենք մասնայական
եքսկուրսիաներ դեպի մուզեյները, ցուցահանդեսները, սարքում ենք
պատշաճներ քաղաքից դուրս և մանկական տոներ առողջ և ոգտակար
զվարճություններով: Վերջապես պետք է «տոնական» որերը ոգտա-
գործել հասարակական-ոգտակար աշխատանքի համար (պարապմունք
փոքր յերեխաների, անաստատանների հետ, աշխատանք կոլտնտեսու-
թյուններում, քաղաքային այգիներում, խրճիթ-ընթերցարաններում,
տիումներում):

Պիտներները համընթաց են դնում Ժամանակակից կոլեկտիվ կեն-
ցողի հետ: Անցման շրջանի կենցաղը ունի ծիսակատարության վորոշ
եյթեկաններ, վորոնք հակադրվում են հին, քարացած, անկուլտուրա-
կան պահպանողական կենցաղին իր անխուսափելի հարեցողությամբ,
խալիզանությամբ, անզրադիտությամբ և յեկեղեցով:

Մացիալիստական մրցման մեթոդն անկասկած կարող է հիանալի
արդյունքներ տալ պիտներների հակակրոնական աշխատանքը բարելա-
վելու գործում: Միայն այստեղ պետք է հիշել, վոր մենք ձգտում ենք
հակակրոնական պրոպագանդի վաչ թե քանակական, այլ վորակական
արդյունքներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Պատանի պիտներների հակակրոնական աշխատանքի հիմնական
թիրությունը միակերպությունն է: Ձանձրալի զրույցներ և մակերե-
սային հակաճննդյան և հակադասական կամպանիաներ առայժմ հան-
դառնալիս չեն: Ֆրոնտում: Այնինչ պիտներական կարմակերպու-
թյունը պետք է դիտարկել մանկական անաստվածական շարժումը և
հարատայնի նրան նոր բանաբան և դրավիչ ձևերով: Այժմ, դասակար-
գային սուր պայքարի պայմաններում, մենք թշնամուն հաջողությամբ
կարող ենք ջախջախել միայն լավ սրված գեներով: Ուստի անհրա-
ժեշտ է բարձրացնել հակակրոնական դաստիարակության վորակը,
կերպար նոր ձևեր, սրել հակակրոնական պայքարի գեները:

Ներքևում մենք տալիս ենք աշխատանքի մի շարք լավագույն ձևեր:

վոր պետք է կիրառել կոլեկտիվում և նկատի ունենալ կոլեկտիվի աշ-
խատանքների պլանը կազմելիս:

ՊԱՏԱՆԻ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԽՄԲԱԿ

Պատանի անաստվածների խմբակներ հանձնարարվում է ստեղծել
մեծահասակ պիտներների շրջանում, ամբողջաբար կոլեկտիվներում և ա-
ռանձին պիտներ բազաներում և դպրոցներում:

Խմբակում պիտներներին անդամագրելուց, կազմակերպչական
ժողովն անց կացնելուց և ավագ ու քարտուղար ընտրելուց հետո քն-
նվում է ապագա պարապմունքների պլանը: Անհրաժեշտ է, վոր խմբա-
կը մտնեն մեծահասակ և ամենադարձացած պիտներները, վորոնք ար-
դեն ունեն հակակրոնական վորոշ դիտելիքներ: Խմբակը նպատակ է
դնում պատրաստել ակտիվ պատանի անաստվածներ, վորոնք իրենց
բոլոր ընդունակությունները և դիտելիքները պետք է նվիրեն մանկա-
կան անաստվածական լայն շարժման գործին:

Խմբակը ծառայելու յե վորպես մի աստիճան, վորի վրա բարձրա-
նալով պիտները կկարողանան ինքնուրույն կերպով կարգալ հակակրո-
նական հանրամատչելի գրքեր, շոկել կրոնական հարցերում և կղատնա
հակակրոնական լավ պրոպագանդիստ յերեխաների լայն մասնակցի
և չափահաս աղաքնակության մեջ:

Խմբակի նպատակը պարզ ցույց է տալիս, վոր նրա անգամները
թիվը 15-20 հոգուց ավել չպետք է լինի:

Ղեկավարը կազմում է խմբակի աշխատանքի պլանը, վորը, իհար-
կե, կապակցվում է վորոշ տեղական պայմանների հետ, որինսկ ի՞նչ
կրոնի հետ ավելի ծանոթ են և անցյալում կապված են յեղել պիտներ-
ները (քրիստոնեական ուղղափառ, մահմեդական, կաթոլիկ, մոլոտ-
ոական, աղանդավոր և այլն), նրանց կուլտուրական ընդհանուր մա-
կարակը (հասարակագիտական, բնագիտական, քիմիայի, Ֆիզիկայի,
կուլտուրայի պատմության վերաբերյալ դիտելիքների ծավալը), շեք-
ջատատող միջավայրը և նրա վերաբերմունքը դեպի կրոնական և հա-
կակրոնական պրոբլեմները, ի՞նչն է ավելի հետաքրքրում պիտներնե-
րին հակակրոնական հարցերում և այլն:

Խմբակի աշխատանքների պլանը համաձայնեցվում է Մարտնչող
անաստվածների միության տեղական կազմակերպության հետ և ըն-
դունվում է խմբակի անգամների ընդհանուր ժողովում:

Խմբակի դրողմունքները պետք է դարձնել բազմազան, վորպեսզի
ձանձրալի չլինեն, և ամեն անգամ ավելի և ավելի հետաքրքրեն պի-
տներներին և դրավեն աշխատանքի:

Ահա ՊԱ խմբակի պարապմունքների մոտավոր ծրագիրը.

1-ին պարապմունք—կազմակերպչական:

2-րդ պարապմունք—թեմա. «Հավատքը ոչնո՞ւմ է արդյոք բան-
վորներին կայելու իրենց ազատության համար»:

3-րդ պարապմունք—թեմաներ. «Ծնունդի ծագումը» (կամ առա-
ջիկա մի այլ տոնի մասին), «Ի՞նչու համար է սարքվում կոմյերիա-
կան ծնունդը և պիտներները ի՞նչպես են մասնակցում նրան»:

4-րդ պարապմունք—եքսկուրսիա դեպի տեղական ամենահայտնի
յեկեղեցի-թանգարան: Պատմել պիտներներին, թե առաջ յեկեղեցին:

բը ինչքան դրամ, հողեր, սեփական անտեսութիւններ ունեյին, վորտեղից էլ յին ճարում այդ միջոցները և այլն: Պատրաստել զիազրամներ և նկարներ: Յուրջ տալ յեկեղեցին շահագործողի և ճնշողի դերում:

5-րդ պարապմունք—**Թեմա.** «Կրօնական հրաշքները, կամ տերտերները ինչպե՞ս են խարստ աշխատավորներին»: Կատարել ջիմիական փորձեր (մոմի ինքնիրեն վառվելը, հրաշալի մահազրուցիւնները, նկար աղյուսի վրա—«անձեռնազիր պատկեր», շրից գլինի պատրաստելը և այլն): Այդ պարապմունքի համար կարելի յե սարքել հատուկ մասնաշաղկան յերեկո:

6-րդ պարապմունք—**Թեմա.** «Կրօնի և աստուծու հավատքի ծագումը»:

7-րդ պարապմունք—**Թեմա.** «Ինչու առաջ դպրոցներում կրօն էլին դասավանդում»: Այս թեման մշակելիս պետք է պարզել հակահրոնական սրտապաշտողի անհրաժեշտութիւնը այժմայիս դպրոցում:

8-րդ պարապմունք—**Թեմա.** «Յերեկանները և կրօնը»: պարզվում է, թե ինչու պիտոնները գիտակցորեն չեն հավատում աստվածներին և պաշարում են կրօնի դեմ: Մշակվում է մանկական անաստվածահաս շարժման և պատանի անաստվածների խմբակների հարցը:

9-րդ պարապմունք—**Թեմա.** «Հակահեղափոխութիւնը և յեկեղեցին»: «Քաղաքացիական պատերազմը և հողելորականների աշխատանքն սպիտակների մոտ», «Մերձվողյան շրջանի սովը և յեկեղեցին»:

10-րդ պարապմունք. երկուրտիս դեպի պատմական մուգելը: Անտիքանալ իգոնաների, նկարների, կրօնական իրերի, դրքերի հետ, բացատրել նրանց էյութիւնը:

11-րդ պարապմունք—**Թեմա.** «Կրօնը և սոցիալիստական շինարարութիւնը»:

12-րդ պարապմունք—**Թեմա.** «Յեկեղեցու պայքարը դիտութիւնի դեմ (կրօն և դիտութիւն), «Կրօնի վնասակարութիւնը և դիտութիւնի ազդեան աշխատավորների համար»:

13-րդ պարապմունք—**Թեմա.** «Կրօնը, նոր կենցաղը և ապագա հասարակութիւնի ստեղծումը»:

14-րդ պարապմունք—**Թեմա.** «Ինչպե՞ս պետք է աշխատի ակտիվիստ պատանի անաստվածը»:

Պարագմունքներն անց են կացվում գրույցների ձևով, վորոնց ժամանակ հայտնութիւնում, ճշտվում և ձևակերպվում են պիտոնների գիտելիքները: Առավելագոյն չափով ոգտագործվում են դիտողական նյութերը (աղյուսակներ, պլակատներ, դիազրամաներ և այլն): Պատրաստվածներից վերջ յուրաքանչյուր խմբակային կազմում է անցածի համառոտ կոնսպեկտը: Խմբակի ծրագրում նույնպես զբանցվում են կոնսպեկտը և ամենահետաքրքիր հարցերը:

ԶՐՈՒՅՑՆԵՐ

Զրույցների ժամանակ լավագոյն է կիրառել ինդուկցիոն մեթոդը (քննվում են մի շարք փաստեր և պարապմունքի վերջում տրվում են վորոշ ամփոփումներ—յեղարակացութիւններ): Մոտավորապես 1½ ամիսը մի անգամ պետք է հակահրոնական գրույցը կազմակերպել կոլեկտիվի ընդհանուր հավաքում, իսկ ամիսը մի անգամ ողակի պարապմունքներում: Իհարկէ, թե՛ խմբակի պարապմունքներում և թե՛ գրույցների համար թեմաներ ընտրելիս անհրաժեշտ է ուշիուշով հաշի տա-

նել տեղական պայմանները: Բնական է, վոր սկզբում գրույցները պետք է անց կացվեն վոչ թե ընդհանրապես ըստ պլանի, այլ պիտոններին հետաքրքրող հրատապ թեմաների շուրջը: Նրանց պետք է յուսաբանել այն հարցերը, վորոնց մասին նրանք շատ հաճախ խոսում են, վորոնք կապած են արթնացնում նրանց մեջ և այլն:

Կորլաբին ողնելու համար մենք բերում ենք մի շարք թեմաներ և հանձնարարում ենք ոգտագործել թե՛ կոլեկտիվում և թե՛ մանավանդ ողակում:

ա) Ինչու՞ կրօնը կեղծ է դատում հարուստների և աղքատների մեջ: Կոնկերտ որինակներ, վորոնք բացատրում են հարստութիւն և աղքատութիւն պատճառները, ի՞նչ է ուսուցում այդ մասին կրօնը և ո՞ւմ է ձեռնապահ այդ ուսմունքը:

բ) Հակասութիւնները հարուստների և աղքատների ազգքմների մեջ. կուլակների և չքավորների, վաճառականների և հաճախորդների ազգքքը: Կազմել մի պատմվածք:

գ) Ինչու՞ յեն հավատում գյուղացիները— մենակութիւնը և անողնականութիւնը անտեսութիւն մեջ, շուկայից և բնութիւն ուժերից կախում ունենալը, անկուլտուրականութիւնը:

դ) Կարևր և Հոկտեմբերյան հեղափոխութիւնը: Յեկեղեցու հաքրատութիւնը հեղափոխութիւնից առաջ, կապիտալիստների և կալվածատերերի հոգտագործիւնը կրօնի հանդեպ, ո՞ւմ կողմն էր յեկեղեցին Հոկտեմբերյան հեղափոխութիւնի ժամանակ:

ե) Կրօնական կազմակերպութիւնների ղեկավարների դասակարգային կազմը: Յուրջ տալ, վոր կրօնական կազմակերպութիւնների ղեկավարները բանվորներ և դուրդացիներ (չքավոր և միջակ) չեն:

զ) Կրօնի ամրապնդման միջոցները. հրաշքներին, դժոխքին, արքայութիւն և ծեսերին հավատալը, նչել վոր հրաշքների մասին պատմում են վոչ ակնատեսները (միշտ ասում են, վոր այդ պատահել է շատ-շատ վաղուց) մատուցների բացումը և «հրաշագործ» սրբապատկերների հետազոտումը հեղափոխութիւնից հետո:

է) Կրօնը և ազգաբնակչութիւնի ազգանկանացումը: Կրօնը քարոզում է դասակարգային խաղաղութիւն: «Մի սպանիր», ինչպե՞ս էլին այդ մեկնաբանում ջարիդի որով. սեկտանտների կեղծավոր կերպով հրաժարվելը կարմիր բանակում ծառայելուց:

ը) «Իաշտ» քեման անցնելիս պարզել, վոր ազգքքներ և ծիսակատարութիւնները չեն ոգնում գյուղատնտեսութիւնի մեջ: Այլ որինակներ թվում ցուրջ տալ դուրդատնտեսութիւնի բարեբախումը խորհրդային իշխանութիւնի սրով և նրա անել գրութիւնը հեղափոխութիւնից առաջ:

թ) Հեղափոխական տոների տարբերութիւնը յեկեղեցականներից: Ընդգծել հեղափոխական տոների նշանակութիւնը, հաշիւել յեկեղեցական տոների տված վնասները դրամով մի ամիսը, յերեք-չորս ամիսը ընթացքում և դրանք, թե՛ այդ դրամով վորքան դուրդատնտեսական մեքենաներ կարելի յե դնել:

ժ) Կրօնը և աստղագիտութիւնը: Գյուղացին վորտեղի՞ց է դիտելիքներ ստանում դուրդատնտեսութիւնի մասին, ինչպե՞ս է անաջանում դուրդատնտեսական դիտութիւնը: Գյուղատնտեսութիւնը ողնող մյուս դիտութիւնները. մետեորոլոգիա (ողերևութաբանութիւն) և վե-

տերթնարին (տնտեսարուժություն), աղոթքները բերքի համար և յե-
սաղաշատային սխառմք, անասուններին «որհնված» ջրով ոժեկը և կերքի
պահառությունը, անձրևի համար աղոթելը և բնության յերևույթների
որինաչափ հաջորդականությունը, ցույց տալ այս որինակներով, վար
ամեն մի աղոթող սպասում և «հրաշքի»:

բ) Կրոնի սոցիալական արմատները. ինչո՞ւ, բանավորներն ավելի
քիչ են համարում, քան դուրսացիները և տնայնադործները, ցույց
տալ, վոր միայն կրթութունը բավական չէ կրոնը արմատախել անելու
համար:

ը) Տարբեր ժողովուրդների կրոնները. հյուսիսի, դաշտային և
լեռնային յերկրների բնակիչները կրոնական դավանությունները և
հավատալիքները, ցույց տալ, թե ինչպես մարդկանց զբաղմունքն անդ-
րադառնում է նրանց կրոնները բնույթի վրա:

կ) Տարբեր կրոնների հոգեվարականների վեները. ուղիղ և սխալ
դավանության մասին: Կարգալ Ստեպանովի դրքի վորոշ մասերը և
դրել սրտովածքներ. դիտարկումներով ցույց տալ զանազան կրոնների
հետևորդների թիվը—բուդդայական, քրիստոնեյական, մահմեդական,
հրեյական և այլն—դոնել անաստվածության աճումը ցույց տալով
թվերը, վերջնելով «Անաստված» (« Безбожник ») թերթից:

ձ) Գիտությունը և աստվածաշունչը աշխարհի ծագման մասին,
ցույց տալ, ինչպես դիտությունը հերքում է աստվածաշունչի առասպել-
ները, կենդանական աշխարհի թիվը և Նոյա տապանի չափը, աստվա-
ծաշունչն արևի շարժման մասին, ավետարանն աստղերի անկման,
արևի խափարման և այլնի մասին:

կ) Ով է ստեղծել աստծուն: Ցույց տալ, վոր բոլոր կրոններում
յերկնային աշխարհը յեղել է մարդկանց յերկրային հարբերություն-
ների անդրադարձումը—նշել հրեշտակների և սրբերի աստիճանները և
ուշադրություն դարձնել սուտական և այլ սրբերի սոցիալական կազմի
վրա:

չ) Լեռնի մտքերը կորնի մասին: Կարգալ վորոշ տեղեր Յարոս-
լավսկու դրքից և բերել կոնկրետ որինակներ:

ձ) Կրոնը և համաշխարհային պատերազմը: Հալառի, թագավորի
և հայրենիքի համար կովելը, յերդումները, պատերազմում սպանված-
ների պարգևատրումը մյուս աշխարհում, տերտերների պատմած ա-
ռասպելները, թե ինչպես Քրիստոսը յերևացել է խրամատների վրա
կովի ժամանակ:

ը) Կրոնի դերը կապիտալիստական յերկրներում. հետևել թերթե-
րին:

ձ) Կրոնը խանգարում է Խորհրդային իշխանության տնտեսական
և կուլտուրական ձեռնարկումներին սոցիալիստական շինարարաբյան
ասպարիզում: Ցույց տալ որինակներ առորյա կյանքից և հետևել
«Անաստված» թերթերին:

ձ) Սեկուանտների հակախորհրդային աշխատանքը: Բացառել
սեկուանտության (աղանդավորության) ելությունը, հետևել սեկ-
ուանտների ժամանակակից դործունեյությանը:

յ) Մանկական անաստվածական շարժման խնդիրները և պատանի
անաստվածների խմբերի կազմակերպումը: (Չրույցների թեմաներն
տունված են «Անտիոնիդյոյնիկ» ժուրնալից, № 4, 1929 թ. ընկ Վ
Յամեգելի թեղիաները):

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՅԵՐԵԿՈ

Պիոներական մի կոլեկտիվ, կամ ավելի լավ է՝ ուրիշ կոլեկտիվ-
ների կամ դրուպցի հետ միասին կարող է կազմակերպել հակակրոնական
յերեկո: Նախապատրաստությունն սկսել 3—4 շաբաթ առաջ: Վորպես
նմուշ կոլվարի համար տալիս ենք Լ. Սադարևի նյութը Կուրսկ քաղա-
քում կազմակերպված հակակրոնական յերեկոների մասին («Անտիոնի-
դյոյնիկ» ժուրնալից, № 3, 1929 թ.):

«Յերեկոյի ծրագիրը կազմված է յերեք մասից. գեկուցումից, գե-
ղարվեստական բաժնից և մասսայական խաղերից ու զվարճություննե-
րից:

Ձեկուցման հատկացվում է 20—30 րոպե: Պահանջներ գեկուցո-
ղին—գեկուցումը պետք է լինի կազմված պարզ և հասկանալի, դործ-
նական իր բովանդակությամբ և ընդհանուր տոնով, չեն թույլատր-
վում «հիչեր» և «տարորինակություններ»:

Յերբեմն յերեխաների դիտակցության մեջ լաված գեկուցումն
ամրապնդվելու համար սարքվում է հարցերի «խաղ», ցանկացողները
նախորդը հարցերը դրում են առանձին թերթիկների վրա: Ամենահա-
ջող պատասխանների համար տրվում են պարգևներ հատուկ ընտրված
ժյուրիի կողմից: Վորպես պարգև սովորաբար տրվում են հակակրո-
նական դրքեր համապատասխան դեվիզներով (դեվիզի նմուշ—«Ա-
նաստվածներ, կրոնական նախապաշարումների և սնտիպաշտու-
թյան դեմ ակտիվ պայքար մղելով, սոցիալիստական շինարարությանը
մասնակցելու միջոցով, խտացրեք ձեր հակակրոնական Փրոնտը»):
Ձեկուցման առթիվ միջոցով ընդունվում է համապատասխան գործնական
վորոշում, որինակ, ներգրավել ծնողներին հակապիտոնական ընկե-
րության մեջ, նրանց մեջ տարածել հակակրոնական թուղիկներ և
այլն:

Յերեկոյի գեղարվեստական մասում լինում են սոովրաբար խմբա-
կան յերգեր, նվագ, արտասանություններ և Ֆիդուլտուրնիկների յե-
լույթներ, յերբեմն ինսցենիրովիկաներ և պիեսներ հակակրոնական թե-
մաների շուրջը: Կարելի յե հաջող համարել հետևյալ յերաժշտական
պիեսները «Յերկու զանգաղատան խոսակցությունը» (« разговор
двух колоколов »), «Անաստվածների իխտերնացիոնալը»: Հա-
կակրոնական քառյակները նույնպես հշտությամբ կարելի յե յերա-
ժշտության վերածել: Ավելի նպատակահարմար է յերաժշտական հա-
մարները տալ առանձին բաժնում (վորպեսզի սպավորությունն ավելի
ամրողական լինի) ծրագրի մեջտեղում կամ վերջում, յերբ յերեխանե-
րն արդեն հոգնած են:

Ֆիդուլտուրային մարդանքներից ամենից ավելի հաջողվում են
Ֆիդուրային հակակրոնական լողուններ և բուրգեր: Հասկանալի է
Ֆեկտավոր է «աստղ» բուրգը, վորի ժամանակ կարելի յե արտասանել
հակակրոնական լողուններ (որինակ, «Կարմիր աստղի լույսով ցրենք

կրոնի խաղաղը», «չարքերը խտացրեք կարմիր աստղի տակ պայքարելու ընդդեմ կրոնի» և այլն): Կարելի չէ նաև բեմից ցույց տալ ժողովրդական պարերի նմուշներ, վոր հետո յերեկոյի վերջում կատարում են բոլոր ցանկացողները:

Վորպես ինսցենիրովկայի (բեմադրութեան) նյութ կարելի չէ նշել Չեխովի պատմվածքները—«Յերկար արարողութիւնը» («Канитель»), «Ճամի ձայնավորները» (« Певчие »), Դ. Բեդնու առակները: Պիեսներից Գոգոլի «Մնուկի գիշերը» և այլն:

Յերեկոն 4 ժամից ալելի չպետք է տևի: Սա առավելագույն տեղադրութիւնն է: Կարևոր հարց է ընդմիջումների ուղտադրծումը: Ընդմիջումներին, վորոնք պետք է բալական յերկար լինեն (մոտ 20 րոպե), ինչպես և յերեկոն սկսելուց առաջ կարելի չէ սարքել սենյակի խաղեր, բաց անել ընթերցարանը, բուֆետը:

ՀԱՎԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ

Պիոներական կոլեկտիվի սենյակում կազմակերպվում է հակակրոնական անկյուն: Բացի այդ, պիոներները կարող են հակակրոնական անկյուն կազմակերպել բանվորական ահումբում:

Անկյան մոտավոր պլանը—կենտրոնում նկարիչ Դ. Մոորի պլակատը—«Յերեկաները մեր ապագան են», սլախատի շուրջը դասավորվում են անկյան բաժինները:

Առաջին բաժին—«Ինչպես են աշխատում յեկեղեցականները և սեկտանտները» (նյութը կարելի չէ վերցնել «Անաստված» և «Պիոներական պարտված» թերթերից): Այս բաժնում պետք է ցույց տալ, ինչպես դասակարգային թշնամին իր ցանցի մեջ է զբաղում յերեկաններին:

Յերկրորդ բաժին—«Թերթերի և ժուրնալների էջերում»: Այս բաժինը պետք է բաղկացած լինի մի կարմիր տախտակից, վորի վրա պետք է ցույց տալ, թե ինչպես պիոներները և ղարոցականները հակակրոնական աշխատանք են տանում, պայքարում են հին կենցաղի դեմ և կառուցում նոր լուսավոր կյանք, և մի սև տախտակից, վորի վրա արձանագրվում են բացատական փաստերը:

Յերրորդ բաժին— «Տեղական կյանք» (նյութերը յերեկանների և նրանց շրջապատող միջավայրի կենցաղից և աշխատանքից):

Չորրորդ բաժին— «Հարցեր և պատասխաններ»:

Անկյան շուրջը— լողունգներ, նկարներ և դարձարանքներ: Չպետք է ցուցադրել մեծ քանակությամբ միատեսակ առարկաներ (էքսպոնատներ): Լավ է քիչ լինեն էքսպոնատները, բայց լավ պատրաստված:

Անկյան, ինչպես և կոլեկտիվ բացականչութիւնների համար պետք է ուղտադրծել հակակրոնական լողունգներ, վորպեսզի լողունգները չինձու և քաղաքականապես անկայուն չլինեն մենք տալիս ենք յերեկանների հակակրոնական պայքարի հիմնական լողունգները:

- 1. «Այգրարել հնգամյակի համար—պայքարի կրոնի դեմ»:
- 2. «Պայքարը կրոնի դեմ—պայքար է սոցիալիզմի համար»:
- 3. «Կրոնը և սոցիալիզմն անհամատեղելի չեն»:
- 4. «Կորչի կրոնը, կորչի աղգամիջյան թշնամութիւնը»:
- 5. «Գիտութիւնը հաղթում է կրոնին»:
- 6. «Մեծերին փոխարինելու չէ գալիս յերիտասարդ բանակը»:

- 7. «Սոցիալիզմը կրոնի բնական թշնամին է» (Մարքս):
- 8. «Մանկական հակակրոնական բանակը պատրաստվում է դասակարգային պայքարի»:
- 9. «Մանկական մասսաներին աղատենք տերտերների դավերից»:
- 10. «Յեկեղեցիները և սինագոգները—կրոնական հաշիշի ոջախները—վերածենք կուլտուրական ոջախներին»:

ՊԱՏԱՆԻ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

Պիոներները պետք է դառնան մանկական հակակրոնական զորեղ շարժման նախաձեռնարկները և առաջամարտիկները, ստեղծելով պատանի անաստվածների խմբեր:

ՊԱ խմբերի կազմակերպչական կառուցվածքը և նրանց աշխատանքի խնդիրները վորոշված են հատուկ մի կանոնադրութեամբ, վորը կարելի չէ ստանալ ՄԱՄ յուրաքանչյուր կազմակերպութիւնից: Կոլեկտիվները խնդիր պետք է դնեն առաջիկա ուսումնական տարում ղարոցներում կազմակերպելու պատանի անաստվածների խմբեր: Անցյալ տարիների փորձը ցույց է տվել, վոր աշխատանքի հենց այդ ձևը ամենից ավելի կենսունակ և նպատակահարմարն է:

Պատանի անաստվածների խնդիրները կանկրետ կերպով ձևակերպել է Ն. Ամոսովը «Անտիոնիզյոյնիկ» ժուրնայի էջերում (1930 թ. № 1):

- 1. Պատանի անաստվածները շուտով արձադանքում են խորհրդային էլիտանութեան նորանոր ձեռնարկումներին և իսկույն անցնում են նրանց իրազորմանը:
- 2. Պատանի անաստվածներն իրենց ղարոցական հողամասերում կազմակերպում են դուռըտանտեսական ոբիւնակելի աշխատանք, սարքելով համապատասխան ցուցահանդեսներ, ղեկուցումներ և ժողովներ:
- 3. Պատանի անաստվածները տանում են հակակրոնական աշխատանք իրենց ընտանիքներում, հանրակացարաններում և բնակընկերութիւններում:
- 4. Պատանի անաստվածները ղարոցի միջոցով հակակրոնական աղղեցութեամբ ընդգրկում են նախաղարոցականներին և անկազմակերպ յերեկաններին:
- 5. Պատանի անաստվածները պայքար են մղում հարբեցողութեան տոներին, յեկեղեցու վրա արված ծախսերին, կրոնական ծխակատարութիւնների, սովորութիւնների դեմ, մասնավորապես տոնաձառի դեմ և այլն:
- 6. Պատանի անաստվածները ղարոցականների հետ միասին սարքում են հակակրոնական յերթեր, ցույցեր, կարնավալներ:
- 7. Պատանի անաստվածները ողնութիւն են ցույց տալիս ահումբներին, յորձիթ—ընթերցարաններին, բնակընկերութիւններին և ՄԱՄ թղթներին հակակրոնական աշխատանքում:
- 8. Պատանի անաստվածները ղարոցների հետ միասին աղղարնախութեան, առաջին հերթին ծնողների համար կազմակերպում են հակա-

Վրոնական զրույցներ, զեկուցումներ և զեղարվեստական յերեկոներ :

9. Պատանի անաստվածները պայքար են մղում կրոնական նախապաշարումների և սնտոխապաշտութայն դեմ :

10. Պատանի անաստվածները ակտիվ կերպով մասնակցում են իսկ, յերբեմն սկսում են կամպանիաներ յեկեղեցիներում և աղոթատաները անտեսական և կուլտուրական հիմնարկների կարիքների, զանազները ինդուստրիայի կարիքների համար հատկացնելու և յեկեղեցիներում պոսված արժեքավոր իրերը վերցնելու ոգտին» :

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Պիոներները պետք է ծանոթանան և լայն տարածեն դպրոցականների մեջ հակակրոնական լավագույն զեղարվեստական գրականությունը, որինակ հետևյալ դրքերը— (ցուցակը տրվում է ռուսերեն)

1. Л. Гумилевский Колдуны.
2. В. Короленко, Последний луч.
3. Сокол, По стопам отцов изд. «Безбожник».
4. И. Флеров, Мы безбожники! (Хрестоматия).
5. Д. Лондон, чародей
6. Градов, По евангелию, пьеса, изд. «Безбожник».
7. Онруд, Солнце.
8. Д. Бедной, Հակակրոնական լերկերը
9. Стелонов-Скворцов, Беседы о вере (очерк)
10. Бродский и Мендельсон, устная народная слава «Сюность (глава «Колдовство и чародейство в деревней Руси»),

Գեղարվեստական գրականությունը կարելի չէ ոգտագործել նաև, կազմակերպելով գրական յերեկոներ, հատուկ բարձրաձայն ընթերցումներ ցանկացողների համար, դիսկուսիա և մտքերի փոխանակություն կարգացված նյութի շուրջը : Վերոհիշյալ ցուցակը կարելի չէ շատ ավելի ընդարձակել և լրացնել :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՅԼ ԶԵՎԵՐ

Մենք նպատակ չունենինք թվել և նկարագրել հակակրոնական աշխատանքի բոլոր ձևերը : Ուստի մենք բավականացանք միայն թվելով աշխատանքի հիմնական ձևերը, վորոնք սկզբնական չըջանում կողմնակից կողմերին :

Իհարկե, պետք է հատուկ ուշադրություն դարձնել աշխատանքի այնպիսի մասսայական ձևերի վրա, ինչպես որինակ մանկական հակակրոնական ցույցերը, ստորագրություններ հավաքելը յեկեղեցիների փակման համար, հակակրոնական դանդաղ կամպանիաները (կամպանիաներում, կարծես թե, պիոներական կազմակերպությունն արդեն բավական «վարպետ» է), հակակրոնական ցուցահանդեսները, դասախոսություններ մոդական լավտերով, մանկական թատրոններ

բում հակակրոնական նոր Ֆիլմերի և պիեսաների բեմադրությունը, մարտնչող անաստվածների ակտիվի կոնֆերանսների և կուրսերի կազմակերպումը, հակակրոնական աշխատանքի սիստեմատիկ լուսարանումը և կազմակերպումը պատի թերթերի, դիսպուտների, վիկտորինաների, էքսկուրսիաների միջոցով, մշտական աշխատանք չըջապատող միջավայրի, մանավանդ ծնողների հետ :

Աշխատանքի պրոցեսում կոլլարը շատ անդամ գործ կունենա վերահիշյալ ձևերի կիրառման անհրաժեշտություն հետ, և յեթե բավականաչափ պատրաստվի, կարող է հաջողությամբ կիրառել այդ ձևերը : Կոլլարի համառությունը, ԼԿՅԵՄ և ՄՍՄ բլիշների ոգնությունը բազմապատկված իրենց պիոներների ինքնգործունեությունը և նախաձեռնությունը, կտան հիանալի արդյունքներ նոր սերնդի լենինյան վոգով հակակրոնական դաստիարակություն ասպարիզում :

ՀԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Բացատրեցե՞ք կրոնի վնասակարությունը պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական աղատադրական պայքարի համար :
2. Ի՞նչու յեկեղեցականներն այդքան մեծ յնուանդով վորձում են ազդել մանկական լայն մասսաների վրա :
3. Յույց տվե՞ք դպրոցի և պիոներ կոլեկտիվի հակակրոնական աշխատանքի հիմնական թերությունները :
4. Ինչպե՞ս են վերաբերվում կրոնին ձեր կոլեկտիվի պիոներները, ի՞նչ պլանային հակակրոնական աշխատանք եք կատարել և ի՞նչ եք մտադիր անել դասի մշակումից հետո, վորպեսզի իրոք կարողանաք պիոներական աշխատանքին տալ հակակրոնական բովանդակություն :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՎԱՐԻ ՀԱՄԱՐ

«Учебник для рабочих антирелигиозных кружков и Союз безбожников и Тпп, изд. «Безбожник», 1929, Գ. 1 ր. 25 կ. Նույնը գյուղական խմբակների համար :

ԶԱՎԼՎԱՄ

ՄԱՐՏՆԶՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԿՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԿԱԶԸ

Խորհրդային Միության պատանի պիոներներին

Վերոնը հաշիչ է ժողովրդի համար» : «Կրոնը մի տեսակ հոգեկան աղի յե» : Այսպես են բնորոշել կրոնը կոմունիզմի մեծ ուսուցիչներ Մարքսը և Լենինը : Կրոնը խաբեբայություն գենք է, աշխատավորներին հողեկան (բարոյական) ստրկացման միջոց նրանց շահագործողների ձեռքում : Կրոնից հատկապես ամուր կառչում են կուլակները, նեպմանները և բոլթը նրանք, վորոնք ուղում են վերադարձնել իրենց նախկին իշխանությունը բանվորների և գյուղացիների վրա : Կրոնը կապիտալի և կապիտալիստների պաշտպանն է : Կրոնը պահպանում է խավափարմաությունը և նախապաշարումները : Կրոնը ջլատում է պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության միությունը, մթաղնում

ե, դժվարացնում է փոխադարձ հասկացողութիւնը բոլոր յերկրներէ պորտիտարներէ միջև:

Կրօնը թշնամի յե գիտութեան, թշնամի յե կոմունիզմին, թշնամի յե հողեկան և տնտեսական լիակատար աղատագրաման: Կրօնը ճիշակեանքի ապաստանն է, խաղաղամտութեան ոջախ, կուլտուրական հեղափոխութեան, նոր կենցաղի թշնամին:

Կրօնը կամազուրկ է դարձնում մարդուն, յեթնարկելով նրան դոյութիւն չունեցող աստվածների, վախեցնելով դոյութիւն չունեցող զժոխքով: Կրօնը կապիտալիստական յերկրներում բանվորներին կոչ է անում հնազանդել կապիտալիստներին, ուսուցանելով համբերութիւն և խոնարհութիւն, քարոզելով ավետարանի խոսքերը—«Թող ծառաները հնազանդվեն իրենց տերերին»:

Պիոներ, հիշիք, ինչ են ասում քեզ ջո որենքները կրօնի մասին: «Պիոները դեմ է հարեցողութեան և խուլիզանութեան, պիոները պայքարում է կրօնական հաշիշի դեմ»:

Պիոներ, ուստի դու պետք է մասնակցես Մարտնչող անաստվածների միութեան աշխատանքին: Դու պետք է դրա համար պատրաստվես, վորպեսզի ջո մտքերը լինեն պարզ և հստակ, իմաստալից, վորպեսզի ինքդ հասկանաս կրօնի վնասը և կարողանաս մերկացնել և բացատրել ուրիշներին այդ վնասը և տերտերական խաբեբայութիւնը:

Յյուրաքանչյուր կոլեկտիվ կրօնի դեմ պետք է պայքարի նախ իջ մոտ, իր կոլեկտիվի յերեխաների մեջ: Կոլեկտիվում չպետք է լինեն այնպիսի յերեխաներ, վորոնք աղոթում են, խաչակնքում են, կատարում են կրօնական ծեսեր, չեն կուլում կրօնական տոների դեմ, յերբ իրենց ծնողները սարքում են տոնածառեր, թաթախում, գատիկ և այլն:

Պիոներ, հիշիք, վոր այս բոլոր փաստերը մանկութիւնից ջո մեջ հետզհետե դաստիարակում են մի մարդ, վոր ընդունակ չի լինի իրապես կովելու Լենինի դորձի համար, յեթե մանկութիւնից դու չպայքարես կրօնի, կրօնական ծխերի, տոների դեմ:

Բայց այս չի նշանակում, վոր դու ջո շարքերից վունդես կրօնատեր յերեխաներին: Այդ չի նշանակում, վոր դու կոլեկտիվ չպիտի ընդունես կրօնատեր ընտանիքի յերեխային: Գյուղում տերտերը դեռ աղղեցութիւն ունի դյուրացիների մտքերի վրա, կրօնը դեռ պահում է նրանց իր ցանցերի մեջ: Պիոներ, խրճիթ-ընթերցարանում և կարմիր անկյունում սարքիւր անաստվածի անկյուն: Մի մոռանար, վոր նոր կենցաղի նվաճման յուրաքանչյուր քայլը, տնտեսութեան սոցիալիստական փերահատուցման յուրաքանչյուր հաջողութիւնը հանդիպում է կրօնի դիմադրութեան:

Մեղնում, ՍՍՀՄ մեջ, արդեն կան գյուղեր, վորոնք ամբողջովին աղատագրվել են կրօնից, հրաժարվել են աստուծուն հովատարուց, վորնդեմ են տերտերներին իրենց գյուղերից: Ոգնիր Մարտնչող անաստվածների միութեանը, վորպեսզի այդպիսի գյուղերի թիվը հասնի հարյուրների, հազարների:

Սորհանտեսութիւնների և կոյնտեսութիւնների պիոներ կոլեկտիվներ, հիշեցեք, վոր դուք պետք է որինակ հանդիսանաք գյուղերի այն յերեխաների համար, վորոնց ծնողները դեռ պայքարում են կոմունիստների, կոլտնտեսութիւնների դեմ: Հիշեք, վոր դուք պետք է ազդեք

չըջպատաների վրա, ոգնելով հակակրօնական և կուլտուր-կրթական աշխատանքին:

Պիոներ կոլեկտիվները և դպրոցները աշխատում են և շատ տեղերում նրանց հաջողվել է վերացնել դատկական տոները իրենց գյուղում, վորովհետեւ այդ տոները հարեցողութեան տոներ են, յերբ խուլիզանութիւնը, տուր ու դմիոցը անպակաս են լինում գյուղում, յերբեմն հրդեհները ավերում են գյուղը: Այդ տոներին մտիվում են խոչոր գումարներ: Ամեն տեղ պայքարեցեք կրօնական հարբած տոների վերացման համար, վորովհետեւ նրանք կործանում են գյուղը վնաս են հասցնում սոցիալիստական շինարարութեանը:

Շատ քաղաքներում և գյուղերում գիտակից բանվորները և գյուղացիները փակում են յեկեղեցիները և վանքերը, նրանց չենքերում բաց են անում դպրոցներ և ակումբներ, մանկատներ, մուզեյներ, հանրակացարաններ, հաշմանդամների տներ և սանատորիաներ, արհեստանոցներ և ժողովրդի ոգտակար այլ հիմնարկութիւններ: Պիոներ կոլեկտիվներ, ամենուրեք մասնակցեցեք յեկեղեցիների փակման համար միջոց պայքարին:

I և II աստիճանի բոլոր դպրոցներում կազմակերպեցեք պատանի անաստվածների խմբեր և բլիթներ: Բոլոր յոթնամյակներում կազմակերպեցեք հակակրօնական խմբակներ անաստվածների ակտիվ պատրաստելու համար:

Պիոներական Փորպոտներ, պայքարեցեք ծծունդի, դատկի և քրիստոնեյական, մահմեդական, հրեյական և այլ կրօնական տոների վերացման համար:

Պիոներ կոլեկտիվներ, նույնիսկ հոկտեմբերիկների մեջ աշխատանք տարեք, բացատրեցեք նրանց, ձեր ուժերի չափով, վոր վոչ մի աստված, վոչ մի սատանա գոյութիւն չունի:

Մարտնչող անաստվածների միութիւնը հույսը դնում է ձեզ վրա, պատանի պիոներներ, վորպես անաստվածների ամենաջանել ջոկատը: Պայքարեցեք մատահ և համարձակ, չվախենալով հարածանքներից: Դիմեցեք Մարտնչող անաստվածների միութեան տեղական կազմակերպութիւններին, նրանցից ստացեք ոգնութիւն, ցուցմունքներ և խորհուրդներ:

Հարեցողութեան, խուլիզանութեան, կրօնական թույնի դեմ պայքարի, պատանի պիոներ, յեղի՛ր պատրաստ:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՆԱՍՏՎԱԾԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Պատանի անաստվածների Համամիութենական եքսկուրսիա-կոմֆերանսի բանաձեղից)

Այս ամենը մանկական հակակրօնական Փրանտում դնում է մի շարք անհետաձգելի կարեւորաշէույն խնդիրներ:

Անհրաժեշտ է անհապաղ ամրացնել դպրոցական պիոներական սոցիալիստները ՄԱՄ Սորհուրդներին կից: Պետք է հատուկ ուշադրութիւն դարձնել կոմյերիտական-պիոներական կազմակերպութիւնների մասնակցութեանը այս աշխատանքին: Անհրաժեշտ է այնպես, անել, վոր

կամ յերիտական-պիոներական կազմակերպութիւնները գլխավորեն մանկական անաստվածական շարժումը:

Անհրաժեշտ է ամրապնդել և ձեակերպել մանկական անաստվածական լայնածավալ շարժումը, վորպէսզի պատանի անաստվածները իրոք զգան իրենց վորպէս սամուր կազմակերպված ջոկատ:

Անհրաժեշտ է հատուկ ըմբռնել պատանի անաստվածների խմբի և հակակրօնական խմբակի տարբերութիւնը:

Անհրաժեշտ է հակակրօնական դաստիարակութեան դործը կորեկտիվում, դպրոցում այնպէս կազմակերպել, վոր հակակրօնական աշխատանքը չտահմանափակիլի այս կամ այն կամ պանթայով (տոնից-տոն), այլ պիոներ կազմակերպութեան և դպրոցի հակակրօնական ամբողջ աշխատանքը վերածել նոր մարդու դաստիարակութեան սխտեմատիկ, ծավալուն աշխատանքի, որդանապես կապելով այդ ամբողջ աշխատանքը յերեխաների մանակցութեան հետ սոցլալիստական շինարարութեանը:

ՄՍՄ և ՊԱ մանկական կազմակերպութիւնները պետք է իրենց աշխատանքում լայն կիրառեն սոցիալիստական մրցման և հարվածայնութեան մեթոդները:

Պատանի անաստվածները հանձն են տանում մոտ ժամանակում ու ժանդակել Մարտնչոյ անաստվածների միութեան առաջադրանքի իրագործմանը—«Անաստված» տրակտորների շարքայունի ողտին հավաքելոյ ֆոնդը հասցնելու 100 հազար ռուբլու:

Յուրաքանչյուր պիոներ կողեկտիվ, յուրաքանչյուր քաղաքային դպրոց պետք է առաջադրի և հաջող կերպով լուծի յենթաշէֆ դյուզում, կոլտնտեսութեան, խորհտնտեսութեան մէջ անաստվածների քջիջներ և խմբեր կազմակերպելու խնդիրը:



ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹՅՈՒՆ

Ներածութիւն	3
Կրօնը և կամուրիստական շարժումը	4
Յեկեղեցականների պայքարը յերեխաների համար	7
Պիոներների հակակրօնական աշխատանքի ձևերը և մեթոդները	13

ՀԱՎԵԼՎԱԾ

Մարտնչոյ անաստվածների. միութեան կենտրոնական խորհրդի հսկազը Խորհրդային միութեան պատանի պիոներներին	29
Մանկական անաստվածական շարժման հերթական խնդիրները	31

« Ազգային գրադարան



NL0160465

